

տակաւին կը տեսնուին որմանկար պատկերներ և կամարաշէն խորանը: 1833 ին Իպրահիմ փաշայի ձեռքով տրուած է լատինաց (Bar. gd. էջ 99-100):

Յովհաննէս եպս. Երուսաղէմացի, բացի վերոգրեալ տեղեկութիւններէն, կ'աւելցնէ թէ «եւ այժմ աւերեալ է յայլազգեաց. երբեմն ախոռ առնեն զնա և երբեմն խանութ ջուլհակաց» (Հան. էջ 228):

Այս եկեղեցին կառուցուած էր յանուն Ս. Իմաստութեան, ցոյց կուտային պատին վրայ դրոշմուած ձեռաց նշաններ և «քրտնող սիւնը», որուն մարմարին մէջ ծակ մը կար, գրեթէ մատի մը խորութեամբ: Կը թուի թէ ան յառաջ եկած էր անհամար ուխտաւորներուն իրենց մատներովը մետաղեայ ծածկոյթին բացուածքին մէջէն շօշափելու համար մարմարին կարծեցեալ արտաշնչութիւնը: Տարակոյս չկայ թէ այս նուիրական նշանը կը դասաւորուի Երուսաղէմի մէջ Գարրիէլ հրեշտակին մատներու նշանին եւ ժայռերու վրայ շատ մը ուրիշ սրբազան նշաններու հետ:

Սաչի կամ Չարչարանաց ճանապարհին Ս. Տեղեաց աւանդութիւններն աւարտելով պիտի շարունակենք գրել Ս. Աստուածածնի տաճարի և շրջակայից աւանդութիւնները:

Պէտք է հոս յիշել թէ Սաչի ճանապարհին վերոգրեալ աւանդութիւնները ա'լ աւելի կը հաստատուին Ս. Տեղեաց մէջ վաղեմի արարողութիւններով, մեր ձեռագրաց մատենադարանը 1192 թուին Մաշկեւոր վանքին մէջ ընդօրինակուած Տօնաւակ մը ունի, ուր կը յիշատակուի Դ. կամ Ե. դարերուն հաստատուած Աւագ հինգշաբթի գիշերուան թափօրը, զոր կ'արժէ հոս կարճ տողերով նկարագրել: Թափօրը ժամը 7 ին կը հաւաքուի Մատուռին մէջ (ի Ս. Յարութիւն) եւ